XI ԴԱՐԻ ՎԻՄԱԳՐԵՐ ՆՈՐ ԿՅԱՆՔ ԳՅՈՒՂԻՑ

ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայկական ՍՍՀ Արթիկի շրջանի Նոր կյանք գյուղում գտնվում է խաչաձև հատակագծով, կենտրոնագմբեթ մի եկեղեցի։ Հուշարձանի կառուցման ժամանակը հայտնի չէ։ Իր ճարտարապետական հորինվածքով այն աղերսվում է VI—VII դդ. մի շարք կառույցների հետ (Աղջովիտի ս. Գևորգ, Լմբատ, Նալբանդ, Կարմրավոր, Ծպնի և այլն)։ Հուշարձանի մասին առաջին անգամ հիշատակել է բազմավաստակ հայագետ Ղ. Ալիշանը[1]։

1913 թ. հայ ճարտարապետության պատմության մեծ երախտավոր Թ. Թորամանյանը, այցելելով Մեճթլի (ներկայիս Նոր կյանք), Ն. Մառին ուղղած դեկտեմբերի 18-ի նամակում գրել է. «Այս եկեղեցին թեև բոլորովին նախնական վիճակի մեջ չէ մնացած, արևմտյան կողմե քանդվեր է և վրան հավելվածներ են արած, սակայն, ըստ ինքյան մնացած մասերը ցույց կուտան թե մինչև 7-րդ դար գոյություն ունեցող ոճին կպատկանի»[2]։ *Թ. Թորամանյանի թվագրությունն ընդունել է նաև Հ. Ստրիժգովսկին*[3]։ *Գ. Զուբինաշվիլին, հուշարձանի հյուսիսային որմի 1020 թ. շինարարական արձանագրության առկայությունից ելնելով, այն թվագրում է XI դարով*[4]։ *Ի մի բերելով նախորդ ուսումնասիրողների նյութերը և Նոր կյանքի եկեղեցին համեմատելով Հայաստանի վաղ միջնադարյան այլ կառույցների հետ, ճարտարապետ Վ. Գրիգորյանը այն թվագրում է VI դ. երկրորդ կեսով*[5]։

Եկեղեցին շաղված է գորշ գույնի տուֆի սրբատաշ քարերով։ Նրա հյուսիսային պատին փորագրված են մի շարք արձանագրություններ, որոնք տակավին գիտական հրատարակություն չունեն[6]։ *Արձանագրություններից երկուսի առաջին տողերը հրատարակել է Ղ. Ալիշանը*[7]։ *Վերոհիշյալ վիմագրերին*

---

1 *Ալիշանին հայտնի է եղել միայն եկեղեցու գոյությունը, որի մասին նա գրել է. «Իբրև փարսախաւ ի Մ. Հ. Արդիկայ ...կայ Մեչիտլի գիւղ, յորում հին եկեղեցի յամրոց փոխեալ, որպէս Հառիճայն և Արդիկայն, այլ զի արդեն ինձ ոչ յայտ» (Ղևոնդ Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 165)։*

2 Թ. Թորամանյան, *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 203։*

3 J. Strzgowski, Die Baukunst der Armenies und Europa, B. 1, Wien, 1918, s. 99.

4 Г. Н. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967, с. 69. *Ինչպես ստորև կտեսնենք, հուշարձանի որմին այդ թվականի շինարարական արձանագրություն չկա։*

5 Վ. Գ. Գրիգորյան, *Վաղ միջնադարի հայ ճարտարապետության գմբեթավոր քառաթև երկու հուշարձան (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 4, էջ 39—43), նույնի Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 36։*

6 *ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար Ս. Գ. Բարխուդարյան) «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի Շիրակի պրակի նյութերը հավաքելիս ընդօրինակել է նաև Նոր կյանքի եկեղեցու արձանագրությունները։ Շնորհակալություն ենք հայտնում վիմագրության բաժնի աշխատակիցներին, որոնք սիրով մեզ տրամադրեցին հանգուցյալ Ս. Բարխուդարյանի անտիպ արխիվը՝ վերջինիս վերծանությունները մերի հետ համեմատելու համար։*

7 Ղ. Ալիշան, *Շիրակ, էջ 176։*

ժամանակին ուշադրություն է դարձրել Թ. Թորամանյանը և լուսանկարել դրանք։ Այդ լուսանկարներից երկուսը հետագայում գետեղվեցին նրա ուսումնասիրության մեջ[8]։ Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձաններին նվիրված գրքույկում արձանագրությունների գոյությունն է նշել նաև հնագետ Հ. Եղիազարյանը։ Վերջինս, դրանք համարելով անընթեռնելի, բերում է միայն թվականները[9]։

Նոր կյանքի եկեղեցու բոլոր արձանագրություններն ունեն սոցիալ-տնտեսական բովանդակություն, որոնցից մի քանիսում որպես նվիրատու է հիշատակվում Գագիկ Ա Բագրատունին։ Ինչպես հայտնի է, Գագիկ առաջինի գահակալության տարիներին (989—1020) Բագրատունյաց թագավորությունը հասավ իր հզորության գագաթնակետին. «Եւ տիրեաց նա (Գագիկը) յոյով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր. և ոչ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայսս»[10]։ Գագիկ առաջինի մասին հիացմունքով է գրել իր ժամանակակիցը՝ անվանելով նրան «...այր հզօր և յաղթող ի պատերազմի. սա ի խաղաղութեան կալաւ զաշխարհս Հայոց»[11]։ Երկրորդ անձնավորությունը, որը քանիցս հիշատակվում է արձանագրություններում, ժամանակի հայտնի հասարակական և կրոնական գործիչ Սարգիս Ա Սևանցին է (992—1019), որի մասին մեծ դրվատանքով են հիշատակում Ասողիկն[12] ու Լաստիվերտցին[13]։ Նրա հայրապետության տարիներին մի շարք միջոցներ ձեռնարկվեցին կաթողիկոսության ենթակա թեմերի վիճակների ամրապնդման ուղղությամբ։ Այս առումով հարկ է նշել Սյունյաց հոգևոր թեմին ենթակա տիրույթների վերահաստատումը, որն իրականացվեց Սյունիքի աշխարհիկ և հոգևոր տերերին ուղղված Սարգիս Սևանցու 1006 թ. շրջաբերական նամակով[14]։

Սույն հաղորդումը փորձ է աղբյուրներում եղած վկայությունների հիման վրա վեր հանել քննվող վիմագրերի պատմագիտական արժեքը, դրանց սոցիալ-տնտեսական բովանդակությունը։ Արձանագրություններից հնագույնը փորագրված է եկեղեցու հյուսիսային մուտքի բարավորի վրայի կամարակապ քարին։ Այն մեզ հասել է ամբողջովին խաթարված վիճակում։ Պահպանվել է միայն թվականը՝ Թ ՅԺԻ (909 թ.)։

Երկրորդ արձանագրությունը որմի արևմտյան մասում է՝ երեք քարերի վրա։ Գրված է ելնդավոր տառերով և բաղկացած է հինգ տողից (տախտ. I, նկ. 1, տախտ. IV, նկ. 8)։

1 ՆԺ (1001) ԹԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
2 ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԵՍ
3 ՏՐ ՍԱՐԳԻՍ ՈՐ ԹՈՂԻ ՇՈԹԱԻ ՇԱՐՅԱՏ
4 ՅԵՋՆ ԿԱԹ ։Ա։ ԹԷ ՈՔ ՀԱԿԱՌ ԿԱ Ն
5 ԶՈՎԱՍ Է ՅԱՅ ։Յ։Ժ։Ը։ ԻՅՆ ԵՒ ՄԷ/Ն/Ջ[15]։

---

8 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 204, նկ. 205, 206։

9 Հ. Եղիազարյան, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Երևան, 1975, էջ 40։

10 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ս. Պետերբուրգ, 1885, էջ 256։

11 «Պատմութիւն Արիստակեայ Լաստիվերտցւոյ», Թիֆլիս, 1912, էջ 8։

12 Ասողիկ, էջ 258—260։

13 Լաստիվերացի, էջ 8։

14 «Պատմութիւն նահանգին Սիսիական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 308—311։

15 Արձանագրության սկիզբը հրատարակել է Ղ. Ալիշանը. «Ի թվականութեան Հայոց (եւ ի) Թագաւորութեան Գագկա ես Տէր Սարգիս որ թողի...» (Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 176)։

Երկրորդ տողի վերջում գրիչը սկսել է ՏԷՐ բառի փորագրումը, սակայն թերի թողնելով այն զետեղել է հաջորդ տողի սկզբում։ Չորրորդ տողում հա-



1



2



3

Տախտակ I.

Կառակ է փորագրված թէ շաղկապը։ Դատելով արձանագրությունից՝ Սարգիս Սևանցին 1001 թ[16]. վերարդրել է Շոթա գյուղի շարիատը, որը բնագրում հավասար է Ա (1) ԿԱԹ-ի։ Շարիատ հարկային տերմինը բազմիցս վկայված

16 Վ. Գրիգորյանը արձանագրության թվականը կարդացել է Նժ (961), որը սխալ է (տե՛ս Վ. Գրիգորյան, Վաղ միջնադարի հայ ճարտարապետության դմբեթավոր քառաթև երկու հուշարձան, էջ 41, Նույնի՝ Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, էջ 35)։

է վիմական արձանագրություններում[17]։ Այն մանրակրկիտ քննել են մի շարք ուսումնասիրողներ[18]։ Ի մի բերելով վերջիններիս նյութերը, Բ. Առաքելյանը գրում է. «...շարիատը գանձվել է թագավորների, իշխանների և այլ ֆեոդալների ու հողատեր դարձած մեծատունների սեփական տիրույթը հանդիսացող բնակավայրերի բնակչությունից՝ իբրև հողահարկ և անասնահարկ բնամթերքով և դրամով, ըստ որում, գանձվել են հաց, յուղ, այլ մթերքներ, բամբակ և այլն»[19]։ Եզան դիմաց շարիատ առնելու մասին է վկայված Գառնիի հեթանոսական տաճարի մուտքի պարակալի վրայի 1291 թ. արձանագրության մեջ, որտեղ շարիատի չափը որոշված է դրամավճարով. «...ԵԶՆ :ԺԱ: ՍՊ(ԻՏԱԿ)։ ՇԱՐԻԱՏ ԷՐ...»[20]։ Այժմ տեսնենք, թե ինչ իմաստով է գործածված ենթադրվող արձանագրության մեջ նշված հարկի չափ Ա ԿԱԹ-ը։ Տեկորի 971 թ. արձանագրության մեջ տրված է շարիատի չափը. «Ես Խաչատուրանիշ Հայոց թագուհի հաստատեա, եմ ոՏեկորոյ շարյեատն յեոն կայթ մի»[21]։ Հ. Մանանդյանը, քննելով վերը նշված արձանագրությունը, Տեկորի յուղի բնահարկը հավասարեցնում է բյուզանդական 60 լիտրի (19,594 կգ)[22]։ Եթե հավանական համարենք այն հանգամանքը, որ գրիչը կարող էր ԿԱԹ տառաշարքում բաց թողնել Ի տառը, ապա պարզ կդառնա, որ եզան դիմաց Շոթա գյուղից գանձվում էր մեկ ԿԱՅԹ հարկ (տվյալ դեպքում վկայագրում բաց է թողնված թե բնահարկը ինչ պարունակություն է ունեցել)։ Չի բացառվում, որ անասնահարկը կարող էր վերցվել նաև կաթնամթերքով, իսկ թե ի՞նչ չափի, իր ժամանակին հանրահայտ լինելու պատճառով չի նշված։

«Կաթ» տերմինը երկու անգամ վկայված է XV—XVI դարերի հիշատակագրերում։ Բերում ենք երկու վայրերն էլ քաղվածաբար. 1. «...Եւ տան դայս սպիտակս ամէն տարի ի մէկ տանուտէր և զԿաթն առնուն քահանայքն և աստուած անեղ ասեն...», 2. «...Կատն առնուն՝ Ճ եկեղեցոյ, Ճ իրիցներուն, աստուած անեղի»[23]։ Ըստ Լ. Խաչիկյանի, «կաթն» տերմինը «գործ է ածված մայր գումարի ամեն տարի բերող շահի իմաստով»[24]։ Քննության առնելով

---

17 «Վիմական տարեգիր։ Ցուցակ ժողովածու արձանագրության հայոց», կազմեց Կ. Կոստանյանց, ս. Պետերբուրգ, 1913, էջ 8, 13, 14, 26, 107, 126, 127, 130, 138, 142, 161, 162, 247, Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, Գառնի, հ. 3, Երևան, 1962, էջ 45, Կ. Գ. Ղաֆադարյան, Երևան, միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 192—193։ Ավանի 1220 թ. արձանագրությունն ավելի վաղ հրատարակել են Մխիթար վարդապետն ու Կ. Կոստանյանը, որոնք, սակայն, սխալ են վերծանել շարիատ տերմինը (տե՛ս Մխիթար վարդապետ, Մի քանի արձանագրություններ, «Հանդես հայագիտության», հ. բ, 1903, էջ 12, Կ. Կոստանյան, նշվ. աշխ., էջ 62)։

18 Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, СПб., 1893, с. 80; С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, вып. I, Киев, 1919, с. 4. Հ. Մանանդյան, Երկեր, հ. դ, Երևան, 1981, էջ 147—153, Ս. Պ. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1956, էջ 192, Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հ. Ա, Երևան, 1957, էջ 402—409։

19 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. 2, Երևան, 1964, էջ 225։

20 Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 45։

21 Կ. Կոստանյան, նշվ. աշխ., էջ 8։ Ի դեպ, այս արձանագրության առաջին հրատարակող Ն. Սարգսյանը մեզ հետաքրքրող հատվածում վերծանել է՝ «...յեզն կայթ մի...» (Ն. Սարգիսյան, Տեղագրություն ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 207)։

22 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 152, տես նաև «Նոր բառգիրք Հայկազյան լեզվի», (ՆՀԲ) հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1044։

23 Լ. Ս. Խաչիկյան, Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերեն ձեռագրերի մեջ և նրանց աղբյուրագիտական նշանակությունը («Բանբեր Մատենադարանի», 5, Երևան, 1960, էջ 29—30)։

24 Նույն տեղում, էջ 30։

կովկասյան լեռնականների շահի հաշվառման մի եղանակի մասին Մ. Կովալևսկու այն հիշատակությունը, թե «նրանց մոտ շահույթի հաշվարկման հիմքում դրված է կովի բնական աճը, դրա հետ մեկտեղ հաշված է այն եկամուտը, որ տալիս է նա կաթի և պանրի ձևով»[25], Լ. Խաչիկյանը նշում է. «կաթն» հայկական տերմինի գոյությունը «շահ», «տոկոս» նշանակությամբ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ հնում շահի հաշվառման այդպիսի մի եղանակ է կիրառվել նաև հայկական միջավայրում»[26]։ Ակներևաբար նմանօրինակ երևույթի հետ գործ ունենք խնդրո առարկա արձանագրությունում։

Այժմ Շոթա տեղանվան մասին։ Այն մեկ անգամ էլ հիշատակված է որմի կենտրոնական մասում փորագրված գրեթե ամբողջությամբ եղծված արձանագրության մեջ (տախտ. I, նկ. 2, տախտ. IV, նկ. 9) .....—ԵՑԻ ՇՈԹԱՒ ՋՈՒՐՆ ՄԻ .....[ՀԱ]ՅԿԱՌ ԿԱ Ն.....ԵՂԻՑ ՅԱՅ ՅԺԸ ՀՐԱՅՐԱՊԵՏԱՅՆ[].....։ Պատմական Շիրակ գավառում այդ անունով բնակավայր աղբյուրներում երկու անգամ հիշատակված է Հոռոմոսի վանքի XIII դ. արձանագրությունների մեջ։ Ըստ առաջինի, Անիի Գրիգոր արքեպիսկոպոսը, ի թիվս այլ գյուղերի համայնքների, վանքին է ամրացնում նաև՝ «...զիւր գեղջէիցն զակնաց եւ զշաւթաի եւ սաղբնազեղի զժողովրդութիւնն...»[27]։ Երկրորդում՝ Ռուզուքանի դուստր Խութլուխաթունը վանքին է նվիրել «...գեաւղն զՇաւթա...»[28]։ Հավանաբար, քննվող արձանագրության մեջ և Հոռոմոսի վանքի վիմագրերում վկայված Շոթան նույն տեղանունն է։

Մեզ հետաքրքրող հաջորդ արձանագրությունը փորագրված է հյուսիսային որմի կենտրոնական մասում։ Այն ութ տողից է։ Այստեղ ևս վնասված մասեր կան (տախտ. II, նկ. 4, 5)։

1 ՆԿ (1011)։ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ
2 ՈՑ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ
3 Տ̄Ն ՍԱՐԳՍԻ ՀԱՅՈ[Ի]Ց ԿԱԹԱՂ
4 ԻԿՈՍԻ ԿԱՄ ԵՂԵԻ ԻՆՁ ԳԱԳԿԱ ՇԱՀ
5 ՐՆՇՈՒԱՀԻ ՈՐ ԵՏՈՒ ՁԾԸՄԲԱՔԱՐՆ Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱԹՈՌՆ Ի Տ̄Ր ՍԱԼՐԳԻՍ։
6 ԵՍ Տ̄Ր ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑ ԿԱԹԱՂԻԿՈՍ ԵՏՈՒ Ի ՇԱԹ ԵՒ ԵԴԻ ՎՃԻՌ ՅԵՏ ՓՈԽՄԱՆ
7 ԳԱԳԿԱՅՍ ՇԱՀԼՆՇԱՀԼԷՍ :Ե: ԱՒՐ ԱՐՆԵԼ ԱՄՄԵՆ ԱՄԻ ԱՆԽԱՓԱՆ Յ Ի ԳԱԼՈՒՍՏՆ Քի ՈՐ ՈՔ ԽԱՓԱՆԷ :ՅԺԸ: ԻՑՆ
8 ԵՒ ՅԱՄԷՆԱԿԱԼ ԲԱՆԷՆ Ա̄Յ ՆՔՈՎԱԾ Է[29]։

Արձանագրությունից պարզվում է, որ 1011 թ. Գագիկ Բագրատունին կաթողիկոսական աթոռին է ընծայել ԾԸՄԲԱՔԱՐԸ, որի դիմաց կաթողիկոսը պարտավորվել է յուրաքանչյուր տարին հինգ օր պատարագ մատուցել թագավորի հոգու փրկության համար։ Նվիրագրի առաջին հատվածում հիշատակված Ծմբաքար տեղանունը կամ գյուղի անվանում է, կամ էլ, թերևս, տվյալ բնակավայրին մոտակա հանդամասի անվանում (Ծըմբա Քարն)։ Շիրակ գավառում այդպիսի բնակավայր աղբյուրներում չի հիշատակվում։ Ծմբո անունով գյուղ է վկայված Ապահունյաց գավառում՝ կապված Ատրպատականի Մամլան ամիրայի դեմ 998 թ. հայ-վրացական միացյալ ուժերի տված ճա-

25 М. Ковалевский, Закон и обычай на Кавказе, т. I, М., 1890, с. 208—209.

26 Լ. Ս. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 31։

27 Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 151, Н. О. Эмин, Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего, М.,1881,с.34.

28 Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 159, Կ. Կոստանյան, նշվ. աշխ., էջ 144—145։

29 Արձանագրության սկիզբը այլ թվականով հրատարակել է Ղ. Ալիշանը՝ «ՆԾԹ թուականութեան Հա յոցի հայրապետութեան Տեառն Սարգսի Հայոց...» (Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 176)։

ԷՆԿՌՈՒԱԿԱՆՈՒՌԷԱՆ ՀԱՅ
ՈՑԻՀԱՅՐԱՊԵՄՈՒՌԷԱՆ Ն
ՄՆՍԱՐԳՍԻՀԱՅՈՒ ՑՆԱՌԱՂ
ԻԿՈՒԿԱՄԵՂԵՒԻՆՀԳԱԳԿԱՀ ԱՀ
ԱՀԻՈՐԵՄՈՒՕՕՀՄԲԱՓՀԱՍՐՕՆԻՍՈՒՐԲԼՈՒՍԱՒ ՊՀԻԱՌՈՒՆԻ ՄՐՍԱ
Ե ՍՄՐՍԱՐԳԻՍԻՀԱՅՈՅԿԱՌԱՂԷԿՈՍԵՄՈՒԻՀԱ ՐԷԻԵԴԻՎՀԷ Ռ ՅԵՄ ՓՈԽՄԱՆ
ԳԱԳԿԱՅՍՀ ԱՅ ԷՍ:Ե: ԵՐ ԱՐՆԵԼԱՄՄԷՆԱՒԻԱՓԱՀԳԱԼՈՒՍՄՆԲԻՊՐՈՓԻԱՔԱԷ:ՅԺԸ:ԻՅՆ
ԵԻՅԱԷՆԱԿԱ ԼԲԱԷԷՆԱՅՆՕՈՎԱՔ

5

Տախտակ II.

կատամարտի հետ, «Առ որ միբան հասանէին զորքն Հայոց եւ Վրաց, եւ չուեալ երթան ի գաւառն Ապահունեաց, բանակին յանդիման բանակին Մամլանայ ի բարձրաւանդակ ամրագոյն տեղւոջ մի, ի սահմանս գեղջն Ծմբոյ, և բազում աւուրս օթեանս կալեալ»[30]։ Վերոհիշյալ Ծմբո գյուղը նույնացնել քննվող արձանագրությունում հիշատակվածի (սեռականով՝ Ծմբա) հետ քիչ հավանական է թվում։ Ինչպես հայտնի է, Տայքի Դավիթ կյուրապաղատի մահվանից հետո Վասիլ Բ կայսրը (976—1025) Ապահունյաց գավառը Մանազկերտ քաղաքով դեռևս 1000 թ. տվել էր Վասպուրականի թագավորությանը[31]։

Արձանագրության 6-րդ տողում անբացատրելի է մնում ՇԱԹ տառաշարը։ Բառիս բացատրությունը չենք գտնում և ոչ մի բառարանում[32]։ Բարսեղ Կեսարացու կանոնների հայերեն թարգմանության մեջ հանդիպում ենք «շաթ» տերմինին, որի մեկնաբանությունը ևս չի տրված։ Նկատի ունենալով այս նույն պարագան, մեջ ենք բերում Բարսեղ Կեսարացու մեզ հետաքրքրող հատվածը. «...եւ յայտ յիշատակացն է եւ զի հաւաստապէս յիշատակին կենդանիք եւ մեռեալք, բայց մատուցողքն զզգոյշ կացցեն յիշատակացն քառասնիցն՝ ի շաթիցն և ի պատարագացն եւ յաւրինաց անտի չճաշակիցէ, նմանապէս եւ յայլ մեռելոց պատարագաց»[33]։ Թվում է, այս հատվածում և խնդրո առարկա արձանագրության մեջ «շաթ» և «շաթ» տերմիններն օգտագործված են համարյա իմաստով։

Հաջորդ արձանագրությունը փորագրված է եկեղեցու հյուսիսային մուտքից վերև՝ կամարի չորս քարերի վրա և բաղկացած է երեք տողից (տախտ. I, նկ. 3, տախտ. IV, նկ. 10)։

1 ՆՄԹ (1010) Ի ԹՎԱԿԱԼՆՅՈՒԹԼԵԱՆՅՆ ՀԱՅՈՑ ԵՍ ՏՐ ՍԱՐԳԻՍ ԴԱՐՁՈՒՑԻ[3]

2 ՁԳՈՒՐԳԷՆԱ ՈՐԴԵՑՆ ՀԱՅՐԷՆԻՔ Ի ՅԻՐԵՆՑ ԴԱՏԱՍԱՐՈՎ ԵՒ ԱՇԱՆԻ——

3 ——ԹԷ ՈՔ ՀԱԿԱՌԱԿ ԿԱՆ ԵՒ ՅԱՅ ԵՒ ՅԱՄԷՆ ՍՐԲԵ։ Արձանագրության երկրորդ տողի վերջը, ինչպես նաև երրորդ տողի սկիզբը, քայքայված է և դժվար վերծանելի։ Բովանդակությունը հետևյալն է. Սարգիս Սևանցին 1010 թ[34]. ոմն Գուրգենի որդիներին է վերադարձրել իրենց հայրենի տիրույթները։ Հայտնի է, որ Աշոտ Գ Ողորմածի (953—977) որդիներից Գուրգեն Ա Բագրատունին

---

30 Ասողիկ, էջ 271։

31 Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908—1021 թթ. Երևան, 1969, էջ 198—199։

32 Պարսկերեն բառարաններում հանդիպում ենք շարթ (شرط) պայման (տե՛ս «Բառարան պարսկերեն-հայերեն», կազմեց Գարեգին քահ. Կիրակոսյան, Թեհրան, 1933, էջ 349, նաև՝ «Персидско-русский словарь, т. II, М., 1970, стр. 98) տերմինին, որը, թերևս, կարող էր կիրառված լինել մեզ հետաքրքրող հատվածում. «...եւտու ի շարթ (պայման) եւ եդի վճիռ յետ փոխման...»։ Հայկական միջնադարյան աղբյուրներում հանդիպում են հարադրություններ, որտեղ պայման և վճիռ տերմինները հանդես են գալիս միասնաբար (հմմտ. «գրէ պայման վճռի զայս օրինակ», «արդարաք զայս գիր պայմանի հաստատուն և անխախտ վճռի», «արդ մի որ իշխեսցէ այսմ անուտ վճռիս և պայմանիս ընդդիմակաց լինել», «և գրէ զվճիռ պայմանին իւրով ձեռամբն այսպէս», Ստ. Օրբելյան, էջ 218, 231, 238, 286)։ Շարթը պայման իմաստով պահպանվել է նաև հայերենի բարբառներում (Մխիթար Աբրա, Բառգիրք հայկազյան լեզվի, հ. Բ, Վենետիկ, 1769, էջ 347, ՆՀԲ, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 594, Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 533)։

33 «Կանոնագիրք Հայոց», հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ 176։

34 Ըստ Վ. Գրիգորյանի ՆՄԹ (1003 թ.), (տե՛ս Վ. Գրիգորյան, Վաղ միջնադարի հայ ճարտարապետության գմբեթավոր քառաթև երկու հուշարձան, էջ 41, նույնի՝ Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, էջ 35)։

(սա հայտնի է նաև Կյուրիկե կամ Դերենիկ անունով), ստանալով Տաշիրը և Զորագետը, 972 թ.[35]. հիմք դրեց Լոռվա Կյուրիկյան թագավորությանը։ Նրան հաջորդած Դավիթ Անհողինը (մոտ 996—1048/49) իր եղբայր Սմբատի հետ ոչ միայն ընդարձակեց թագավորության սահմանները, այլև փորձեց ազատվել Դագիկ Բագրատունու գերիշխանությունից։ Վերջինս 1001 թ. ձմռանը մեծ ուժերով մտավ Լոռի, պաշարեց Շամշուլդեն և սկսեց սվերել թագավորության



6



7

Տախտակ III.

ամրությունները։ Դավիթը չհամարձակվեց մարտի բռնվել հորեղբոր հետ «...յաղագս սակաւ լինելոյ զօրաց նորա (Դավթի) առ բազմութեամբն զօրացն Գագկայ. այլ միշնորդութեամբ Տեառն Սարգսի եկն ի հնազանդութիւն Գագկայ արքայի, և հանդիպեցաւ նմա յաւանն Շիրակայ։ Եւ ուխտ խաղաղութեան հաս-

35 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 102։ Լոռվա թագավորության հիմնադրման ժամանակի հարցը մինչ այժմ վիճաբանությունների տեղիք է տալիս (Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հ. 2, Վենետիկ, 1785, էջ 851, Ղ. Մովսեսյան, Լոռի Կյուրիկյան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923, էջ 28, Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 609, Ի. Ղարիբյան, Կյուրիկյան թագավորության հռչակման տարեթվի շուրջ («Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 1), Ռ. Մաթևոսյան, Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1), Նույնի՝ Լոռվա թագավորության կազմավորման պատմությունից (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1970, № 3), Նույնի՝ Տաշիր-Զորագետ (X դ.—XII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 74)։

տատեալ Տեառն Սարգսի՝ կալ ի հնազանդութեան Դաւթի, իբրեւ որդի առ հայր, եւ Գագկայ՝ հայրենի խնամով սիրել զնա»[36]։ Արդյո՞ք այս դեպքերի հեռավոր արձագանքը չէ քննվող արտոնագիրը։ Այս դեպքում կարելի է ենթադրել, որ Կյուրիկյաններից բռնագրավված հողերից բաժին է հանվել կաթողիկոսությանը, որը և հետագայում իբրև հայրենի տիրույթ վերադարձվել է Գուրգենի որդիներին։

Եկեղեցու հյուսիսային պատի մյուս արձանագրությունը ժամանակակից է նախորդին։ Այն փորագրված է որմի արևելյան անկյունում և ունի 12 տող (տախտ. III, նկ. 6, տախտ. IV, նկ. 11).

1 ՆԵԹ (1010) ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ ԱՅՍ ԻՄ
ԳՐԷԱՆ ՍԱՐԳՍԻ ՈՐ ԵԱԽԷՑԻ ՁՁԱՂԱՅՍ ԻՄ
3 ————————————ՈՐԴԵԱՅՆ ԻՒԱՆԻԿԱՆ Ի ԺԱՌԱՆ
4 ԳՈՒԹԱՆ[37] Ի ԳԻՆ ԳԱՆՁԻ, ՁԿԱՐԷ ՈՔ ԽԱՓԱՆԷԻՆ ԵԻ
5 ՈՐՆ Ի ԼՍՇՄԻ ՅԱԹՈՌ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՐԻՇ ԹԵ ՈՔ ՀԱԿԱՌ
6 ԿԱ ՆՁՈՎԱԾ Է Ի ՄԵՁԱՆԷ ՅԺԸ ԻՅՆ
7 ԵԻ Ի ՄԵՐ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԷՍ։ ՀԱՍՏԱՏՈՒՆ Է ԳԻՐՍ ԱՅԼ ՎԱՍՆ
8 ՏԱՐՄՆԱՎԱԳԱ ՈՐ ԱՎԱԳԱՅՍ ՅԱՂԱԳՍ ՁԱՀ
9 ԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԻՐԻՇԻՐ ԵԹԷ ՈՔ ՀԱԿԱՌ
10 ԿԱ ՆՁՈՎԱԾ Է Ի ՅԵՐԿՆԱՎՈՐԱՅ ԵԻ Ի Յ
12 Է ՐԿՐԱՎՈՐԱՅՍ ԿԱՏԱՐԻՁՔ ՀՐԱՄ
13 ԱՆԱՅ ԱԻՀՐՆԻՅԻՆ։

Այս չափազանց հետաքրքրական արձանագրության վերծանությունը մեծ դժվարություն է հարուցում խիստ եղծված լինելու պատճառով։ Այն ունի տընտեսական բովանդակություն։ Պարզվում է, որ Սարգիս Սևանցին 1010 թ. ոմն Իվանիկի որդիներին, որպես դանձագին ժառանգություն, վաճառել է իր սեփական ջրաղացը։ Հետաքրքիր է Նզովքի բանաձևը, որտեղ անհասկանալի է մնում «տարմնավագա որ ավագացս» հատվածը։ Անշուշտ, այստեղ խոսքը հոգևոր ինչ-որ պաշտոնների[38] մասին է (հմմտ. գեղջաւագ, յիշոցաւագ, հեծելյուսաւագ, հարիւրաւագ, հազարաւագ[39], մանկտաւագ[40], մանկեւագ[41])։ Նզովքի հատվածում հետաքրքիր է նաև ջահասիրություն կապակցության կիրառությունը (հմմտ. ջահավառութիւն, ջահավորութիւն[42], ջահալուսութիւն, ջահալուցութիւն)[43]։

Հաջորդ երկտող արձանագրությունը, որ փորագրված է ելնդավոր տաւերով որմի արևելյան անկյունում, ամբողջովին խաթարված է։ Գրչագրական առանձնահատկություններով այն նման է վերը նշված 1001 թ. արձանագրությանը և, ակներևաբար, ժամանակակից է նրան (տախտ. III, նկ. 7).

1 ՅՈ————————Ս ԵԱՌԱՑ ՍՐ
2 ԲՈՅՍ ԳՐԻԳՈՐՈՅՍ

---

36 Ասողիկ, էջ 280։

37 Արձանագրության երրորդ տողը խիստ եղծված է։ Ընդգծված հատվածը տալիս ենք Ս. Բարխուդարյանի վերծանությամբ։

38 Տարմնավագ-բարդություն է՝ կազմված տարմ-խումբ (որից էլ տարմաբանք-խմբովին խոսող եկեղեցու հայրեր) և ավագ բառերից (ՆՀԲ, հ. 2, էջ 857, Ս տ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 388)։

39 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 351։

40 Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. 2, էջ 41—42։

41 Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1973, էջ 46։

42 ՆՀԲ, հ. 2, էջ 668—669։

43 Սիմոն Գարամանճյան, Նոր բառգիրք հայերեն լեզվի, կ. Պոլիս, 1910, էջ 1160։



8

9

10

11

Sufuhiwly IV

Արձանագրության եղծված հատվածում, թերևս, պետք է վերականգնել Ցոյիաննես անձնանունը։ Պարզվում է նաև քննվող վիմագրերը կրող հուշարձանի անունը՝ Գրիգոր Լուսավորիչ։

Եզրափակելով՝ հարկ է նշել, որ քննվող վիմագրերն ունեն պատմաքիտական որոշակի արժեք։ Դրանք արտացոլում են տվյալ ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական հարաբերությունների իրական պատկերը։ Վկայակոչված տերմիններն ու տեղանունները կարող են հետաքրքրական լինել պատմաբանների, հայոց լեզվի պատմության և պատմական աշխարհագրության մասնագետների համար։

ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ XI ВЕКА ИЗ СЕЛА НОР КЯНК

УСИК МЕЛКОНЯН

Резюме

В селе Нор Кянк Артикского района Армянской ССР находится центрально-купольная церковь, на северной стене которой сохранился ряд надписей, имеющих определенный научный интерес в области изучения социально-экономических отношений Армении эпохи развитого феодализма. Упомянутые в надписях поселения (Шота, Цмбакар), а также отдельные термины (кат, шат, тармнаваг и т. д.) могут стать предметом изучения историков, лингвистов и специалистов исторической географии.